ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N3
ԷԱՃԱՊՁԲ-ԱԻՆ-19/7 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՅՏԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆԻՍՏԻ

ք. Երևան **21 հունվարի 2019թ.**
ժամը 12:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝
Արեն Մեսրոպյան՝ ԱԻՆ շենքերի, շինությունների պահպանման և տնտեսական վարչության գնումների կազմակերպման պատասխանատու.
Անդամ՝
Հայկ Ծատուրյան՝ ԱԻՆ իրավական ապահովման և միջազգային պայմանագրերի վարչության օրենսդրության կատարելագործման բաժնի առաջատար մասնագետ.
Բացակայում է
Գարիկ Բոյաջյան՝ փրկարար ծառայության թիկունքի և նյութատեխնիկական ապահովման վարչության պլանավորման, հաշվառման և վերլուծության բաժնի պետ.
Հանձնաժողովի քարտուղար՝
Արմինե Գալուստյան՝ ԱԻՆ աշխատակազմի շենքերի, շինությունների պահպանման և տնտեսական վարչության գնումների կազմակերպման բաժնի գլխավոր մասնագետ.

1. Ընդունել ի գիտություն.

1.1 ՀՀ կառավարության 18.05.2017թ. թիվ 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի /Կարգ/ 19-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե /Կոմիտե/ հարցում է ուղարկվել ԷԱՃԱՊՁԲ-ԱԻՆ-19/7 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի առաջին տեղը զբաղեցրած մասնակցի՝ «ՄԱՔՍ ՕԻԼ» ՍՊ ընկերության հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների, ինչպես նաև «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ:
1.2 Ղեկավարվելով Կարգի 19-րդ կետի 4-րդ ենթակետով՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցին www.eauction.armeps.am համակարգով (Համակարգ) ծանուցվել է՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը և Կարգի 11-րդ կետի 3-րդ ենթակետի «ա» պարբերությամբ սահմանված՝ առաջարկվող ապրանքների անվանումները և տեխնիկական բնութագրերը /ամբողջական նկարագրեր/:

2. Հանձնաժողովն արձանագրեց.

2.1 Կարգով սահմանված ժամկետում՝ Կոմիտեից ստացվել է դրական եզրակացություն (կցվում է):

2.2 Սույն արձանագրության 1.2 կետով պահանջվող փաստաթղթերը սահմանված ժամկետում՝ մասնակցի կողմից համակարգով ներկայացվել են և համապատասխանում են հրավերի պահանջներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 2, դեմ 0

3. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ **<u>հանձնաժողովը որոշեց.</u>**

3.1 «ՄԱՔՍ ՕԻԼ» ՍՊ ընկերությանը 1 չափաբաժնով ճանաչել ընտրված մասնակից:

Ընդունվել է որոշում՝ կողմ 2, դեմ 0

3.2 Հաստատել ԷԱՃԱՊՁԲ-ԱԻՆ-19/7 ծածկագրով ընթացակարգի պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 2, դեմ 0

4. Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները և ազգանունները

Հանձնաժողովի

նախագահ՝ _____ Ա. Մեսրոպյան

անդամ՝ _____ Հ. Ծատուրյան

քարտուղար՝ _____ Ա. Գալուստյան